

ՄԱՐՏ

ԳԱՆԱՓԱՐԻՆ ՈՒԺԸ

Հայոց հոգեկան արդի վիճակը դիտողը կ'անդրադառնայ թէ ա՛յլ կը սկսի փարատիլ լքումի հիւանդութիւնը որմէն պահ մը բռնուեցանք։ Կը վերածնի յոյսը, կը վերականգնանայ հաւատքը։ Տանեակ դարեր միշտ եւ հա՛նապազ ապագային վրայ անյողգող վստահութեամբ ապրելով դիմադրած ենք տառապանքներու սրունց մէկ մասը իսկ բաւական եղած է մենէ նուազ առկուն ցեղերու փճացմանը։ Աւստի եւ լքումի փարտ մեզի համար վաղանցուց հիւանդութիւն մըն է միայն։ Մենք 1895ին մեր յոյսերուն ազատ թօփ տուինք սլանալ, վերամբանալ մինչեւ մեր բղձանքներուն բարձրութիւնը։ Անկումի բուսկէն խնայողութեամբ ախրքան աւելի ցաւատանջ թողուց մեզի որքան աւելի մերէն էր գահալիժութիւնը։ Գրեթէ խելակորոյս նուազեցանք, բայց ուշաբերելու վրայ ենք։

Չենք կրնար մենք զմեզ մեղադրել 1895ի տարապալման ահնալիւթեանց համար։ Մեր մտքին հաւասարակշռութիւնը թեքած էր ոչ թէ այդ թուականին այլ տանքիւթ տարի առաջ։ Օր մը, մինչ ոչ որ կը մտաբերէր, յանկարծ Հայաստանի կացութիւնը Եւրոպայի կարգ խնդրոց անցած տեսանք։ Այսօր չափազանցօրէն ընտելացած բլլալով եւրոպական մամուլին ու գիւտնադիտութեան մէջ հայկական խնդրին ընծայուած կարեւորութեանը, չենք ուզեր յիշել, կամ թէ նոր սերունդ մը կարող չէ երեւակայիլ անպատու բեկրանքը որ 1878ին սողոց հայ սրտերը, երբ եւրոպական գաղտնիքները հայկական խնդրի մը գոյութիւնը կը հաստատէին յանկարծ, ու տիեզերքի մամուլին մէջ իբր օրուան խնդիր մը կը յուզուէր Հայաստանի կացութիւնը։ Ի՛նչեւ այդ թուականը Եւրոպայի գրեթէ անմանօթ էր քաղաքական Հայաստան մը։ Հազիւ քանի մը տարիէ ի վեր անդիական մամուլին մէջ սկզբնաւորութիւն եղած էր հայկական հարցի մը համար մտքերու նախապատրաստութեան, բայց թալանի ծանր Լիբիոյ ժողովրդական տարածումի սահմանուած չէին։ Անակնկալ եւ աներեւակայի բաղդաւաւութիւն էր հայկական խնդրի մը յանկարծածին գոյութիւնը։ Ինքնավար Հայաստանի մը ստեղծագործութեանը համար ո՛ր է ծրագրով մը գործած չէինք։ Գննուցանք, խելքերնիս կորուստից երբ տեսանք թէ առանց ինքնաշարժ գոհարութեանց, առանց յեղափոխական ո՛ր է ձեռնարկի ժողովուրդ մը կրնայ եղեր Եւրոպայի ուշադրութիւնը եւ հոգածութիւնը դրաւել, լոկ իր կրած տառապանքներովը։ Եւ ահա օր մը երբ այդ Եւրոպայի իրար կ'անցնէր, իր ներկայացուցիչները Սասուն կը դրկուէին, Թիւրքիոյ մայրաքաղաքին մէջ իր գեսպանները Հայաստանի համար ծրագիրներ կը պատրաստէին, ամբողջ աշխարհի մամուլը Հայաստանի խնդրով կը զբաղէր, եւրոպական նախադրութիւններ կազմ եւ պատրաստ կը դնէին Պէդիքայի շուրջը, ի հարկին շագնակնայ Պալիստինայու, ահա մենք ալ խելայեղ էինք։ Եւ հարկ է ընդունիլ թէ մենք աւելի փարձ, մենք աւելի պաղարիւն սրել ո՛ր է ժողովուրդ ալ պիտի հմայուէր քաղաքական նուեթեան գիւթիչ հրապարակներէն։

Դատը գործունէ կ'առնէ եղաւ։ Բայց իր հետք բնութեամբ օրականին ալ կը հաւասարին իր ծանրութեանը։

Հայր համոզուեցաւ թէ գիւտնադիտութեան պորտալին մէջ խաղալով չէ որ ժողովուրդ մը կրնայ իր ազատութիւնը շահելու ապահովութիւնը ստանալ։ Նոր թուական մը կը բացուէր 1895ին յետոյ։ Սխալները զեռ պիտի շարունակուէին, բայց Հայը փրկուած էր գիւտնադիտութեան անհաւանքէն։ Մեր յոյսերը արիւնի ծովու մը մէջ ընկըլած, խորասուզուած, կորսուած կարծելէ յետոյ, երբ կը խորխափէինք խաւարին մէջ որ մեր շորս կողմը կը պատէր, ահա հայկական կարմիր ծովէն ցայտող լուսերէնայթ մը իբր ուղեցոյց մեր առջեւէն կ'ընթանար, ինչպէս երբեմն ուրիշ ժողովուրդի մը գիշերը կ'առաջնորդէր ուրիշ կարմիր ծով մը անցնելու պահուն։ Մեր աչքերուն փայլող այդ հրեղէն սիւնը Գ.Ա.Ղ.Ս.Փ.Ա.Ր.ն էր։ Հայ աշխարհին շատ աւերակներուն վրայէն էր անցած անկախ հայ արիւնի շատ ծովերու մէջէն լողացած էր, բայց միշտ ապրած էր իբր անմահ Հոգի եւ իրեն հետ ապրեցուցած էր հայ ազգը։ Ժողովուրդ մը երբ ամէն բան կը կորսնցնէ բայց յամառ պնդութեամբ դադափարի մը կը կառնէ, կը փարի, այդ ժողովուրդը իր փրկութեան հաւատքը միշտ անմեռ կրնայ պահել։

Հրեղէն սիւնը սակայն անապատին վրայ դատարկաշըրջիկ կը թափառայածի եթէ ետեւէն չունենայ առաջնորդութեամբ պատրաստ միագունդ ժողովուրդ մը։ Երբ մտքերը ցրուեցան հոգ կը թափառին ու հոն վայրաւաւանին, Լոյսը ձաքան որո՞ւ ցոյց տայ։ Վերջին տաքնապանքը քակեցին, լուծեցին կապը որ տարիներու ընթացքին մէջ հայ մտքերը հետզհետէ իրարու միացուցած էր, որով 1895ին արդէն ազգային մտքի հոծ, միաձուլ գանգուած մը ստեղծուած էր։ Մեր գործողութեանց յաջողօրն իսկ մէկզմէկ մեղադրել սկսանք, իրարու վրայ ձգելով ազէտին պատասխանատուութիւնը։ Փոխադարձ ամբաստանութեանց այս պոռթկումը յուսահատութեան պիտի մղէր մեզի եթէ երկուքը առաջին անգամ ըլլալով Հայոց մէջ տեսնուած բլլար։ Բայց մարդկային պատմութիւնը ամէն մէկ ժողովուրդի յուսահատութեան վաղորդայնը համանման տեսարաններու նկարագրութիւնը արձանագրած է ի սկզբանէ աշխարհի, եւ պիտի շարունակէ արձանագրել ցկատարած աշխարհի։ Մեր անմիաբանութիւնը գործողութիւն մըն էր, բայց գործողութեանց ժաման էր որ մարդիկ պէտք է ինքզինքնին չկորսնցնեն, եւ իրենց մտքին բոլոր ուժը ամփոփելով դիմադրաւեն դեպքերու։ Ազգ մը, մանաւանդ երբ իր գոյութիւնը վտանգի մէջ է, կարող չէ իր ժամանակը իր բոլոր ժամանակը ամբողջապէս ամբաստանութիւններու գոհել։ Սրտերը փոխադարձ մեղադրանքներով պաղտակելէ յետոյ, մտքերը նորէն միութեան մը անդիմադրելի կարօտը պիտի զգային, վասն զի Գաղափարին գերագոյն ուժը ամէնքս ալ կը վարէ դէպի նպատակակալութիւն ուր ժամանելու էն կենսական պայծառ տեսութեանց, համոզութեան համանմանութեան մէջ փնտռելու էնք։

Ամէնքս ալ այսօր ուրախութեամբ կը տեսնենք թէ հետզհետէ կը պատրաստուի կուսակցութիւնը որուն վրայ օր մը իրարու հետ միացած պիտի գտնուինք։ Ոչ ոք անշուշտ չէ մտածած թէ տակաւին երկու երեք տարի առաջ մեզի բաժան բաժան կ'ընէին այնպիսի խնդիրներ որոնք ո՛ր է վերաբերութիւն չունէին հայկական դատին հետ։ Չորս տարի է աշխատեցանք զազափորային միութիւն մը հիմնելու, ջանալով մեր ազգային մտազբաղումներու շրջանակէն դուրս հանել ինչ որ անմիջական յարաբերութիւն չունի Հայաստանի փրկութեան գործին հետ։ Ո՛ր

երբ այսօր մեր շուրջը կը դիտենք, ուրախութեամբ կը տեսնենք թէ այլ եւ տեսնական, կրօնական խնդիրներ, գաղափարներու առեւտրութիւններ մեր մտքերը չեն գրաւեր, եւ մեզի իրարու դէմ չեն գրգռեր։

Պատրաստուած է ուրեմն դաշտահարութիւն որուն վրայ պիտի կարենան հաւաքուիլ բոլոր հայերը, մէկ բանակ կազմելու համար, մէկ ծրագրով մէկ հայրենիքի փրկութեանը համար։

Այդ բանակը պարզ քարոզութիւններով չէ որ պիտի ստեղծուի, այլ՝ ազգին հաւատք ու վստահութիւն ներշնչող գործնական միջոցներով։

Օրմանեան Պատրիարքը որ սուլթանին կողմէն արեւուած կարգ մը վճարական խոստումներէն յետոյ Հրաժարական էր ետ առած էր, հիմակ նորէն պարտաւորուեց է պաշտօնը չարոնականի, վասն զի իրեն հաղորդուեց թէ արեւուած խոստումները ամբողջապէս պիտի չգործադրուին։

Այս խելկատակութեանց վրայ երկարօրէն չենք ծանրանար։ Պատրիարքը արդէն ազգին իրաւունքներուն համաձայն պահանջները չէր բրած։ Մասնակի խնդիրներու համար գիմուս բրած էր միայն, ու անոնց իսկ գոհացում չտուիր։

Խեղդատակութիւնը կը շարունակուի, ինչպէս չորս տարիէ ի վեր։ Պատրիարքը օր մը հրաժարելով, օր մը արձուր վերադառնալով, դարձեալ հրաժարելով ու դարձեալ հրաժարականը ետ առնելով ազգը խաղցնելու գաղտնիքը սքանչելապէս գտած է։ Սուլթանը շատ զոհ է այս զաւեշտական ներկայացումներէն։ Թիւրք իշխանութեան պէտք եղածը այն է որ Հայոց պահանջներուն ո՛ր է գոհացում տալու հարկին մէջ չգտնուի։ Թափուր կը մեան առաջնորդարանները, իր գահակալը չունի կիլիկիոյ Աթոքը, հայ ժողովուրդը կ'իշխմանայ Հայաստան, հարեւոյտահարութիւնները անօրինակ սաստկութեամբ կը ճնշեն հայ ազգը եւ պաշտօնական բողոքի մը ձայնը չլսուիր։

Ա՛յ ինչ փոյթ սուլթանին թէ Հայոց պատրիարքը հրաժարականի կատակերգութիւնը կը ձեւացնէ։ Տատեան Աթոքին փաշա եւ իր պաշտօնակիցները սքանչելապէս կը կատարեն իրենց յանձնուած գերը։

Հարկ է սակայն որ պատրիարք, ու փաշա, պէյ, էֆէնդի, փոյթականները իրենց վերջնական հետեւները ի գործ դնեն, ինքնազբաղացման վերջին խօսքերնին ըսեն, ու ազգը այլ եւ ոչ իսկ թեթի խմբածանց մը կարենայ ընել յեղափոխական հաշուէպահանջութեան գէտ։

Քիչ մը եւ համարեութիւն թերեւտ անօգուտ չըլլայ։

ՄԵՐ ԱԼ ԿԱՄՔԸ

Պատուոյ Ատենի մը կազմութեան համար հայ ժողովրդէն և մենէ Դաշնակցական Կուսակցութեան ուղղութեամբ հրաւերներուն իբր անձամբայ պատասխան Դրօշակի այս տարուան 3րդ թիւին մէջ պաշտօնական յայտարարութիւն մը երեցաւ։ Այդ յայտարարութիւնը երկու մասի կրնայ բաժնուիլ։ մէկը ուղղութեամբ է ժողովրդին եւ կ'ըսէ՝ «Սակայն ի պատասխան այդ գրութիւններէ, պարտ ենք համարուի յայտնել, որ ատենի հարցը պատկանում է «Դաշնակցութեան» կամքը արտայայտող մարմիններէ լիազօրութեան և հետեւաբար «Դրօշակի» խմբագրութիւն կը հրատարակէ «Դաշնակցութեան» որոշումը, երբ նա կը կայանայ։»

Իսկ երկրորդ մասը Հնչակեան Կուսակցութեան հասցէին ուղղուած է, եւ հետեւեալն է.

«Նայն հարցի վերաբերմամբ «Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան» արած պաշտօնական յայտարարութեան աւելում (Մարտ, Թիւ 24) ստիպուած ենք կրկնել, ի դիտման հասարակութեան, որ այս պէտքով մենք՝ արդէն տեղեկ լինելով «Դաշնակցութեան» ընդհանուր հայեցակէտերէն, բացարձակապէս կարող ենք յայտնել.— Վերականգնող Հնչակեան Կեդրոնը չպիտի ստանայ մեզմէ իր ունէ դիմումին պատասխան, քանի որ մեզ յայտնի է նրա կազմը։ Մեր այս պայմանը գոյութիւն ունի 1896 թիւ և ուրիշ նորութիւն չէ (Յաշխատ, երես 21)։ Եւ եթէ «Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութիւնը»՝ ճշմարտութիւնը պարզելու համար մեզ դիմելու կարիք է զգում, բնականաբար նա պէտք է նախ հոգայ՝ դրա համար հարկաւոր ճանապարհը հարթել։ Հակառակ պէտքով մենք աւելի շուտ պատրաստ ենք մեր ընթացքի համար դատաւարան մեր հակառակորդներէն և նոյնիսկ Կիպրոսում, Ամերիկայում, Մանչեսթրում, Փարիզում և Լոնդոնում ցրուած բոլոր «չէզոքներէն», քան ունէ կոմպրոմիսներէ դիմել։»

Այս հրատարակութիւններէն կը տեսնուի թէ Դաշնակցական Կուսակցութիւնը շատ վարանոտ ըլլալու է որ երեք ամսուան մէջ դեռ որոշում մը չէ կրցած առաջ իսկ իր պաշտօնականութիւն ալ կը բաւականանայ արձագանք ըլլալով միայն «Դաշնակցութեան ընդհանուր հայեցակէտերէն»։ Մենք նկատողութեան անհրաժեշտ Դաշնակցական Կուսակցութեան այս վարանոտ ընթացքը, զոր յուսատու կը համարինք, պարտականութիւն կը ըզգանք ըիջ մը եւս սպասելու զոհողութիւնը ընել. ուստի անմիջապէս ո՛ր է միջոցի չենք դիմեր մեր արդար, օրինաւոր և օրինական պահանջումին զոհացում ստանալու համար։ Կը փափաղինք որ Դաշնակցական Կուսակցութիւնը ինքն իր յօժարութեամբ յանձնառու ըլլալ Սրբաբնութեան յաղթանակը ապահովելու աշակերտ Հիմակուհի մը բաւական պիտի համարինք Դաշնակցական Կուսակցութեան «կամք»ին հանդէպ մենք ալ Հնչակեան Կուսակցութեան «կամք»ը կանգնեցնել։ Բայտարաբերով սակայն որ երկու ընդդիմադիր կամքերէն պէտք է յաղթանակէ ա՛յն որ իրեն յենարան ունի ոչ թէ կամայականութիւնը, այլ իրաւունքի և համաշխարհային օրէնքներու ընդհանուր սկզբունքները։

* *

Հնչակեան Կուսակցութիւնը երբեք չի կրնար զիջանիլ իր ներքին կազմակերպութեան մէջ ուրիշ Կուսակցութեան մը ոտնձգութիւնը ընդունելու։ Մենք ուրիշ մարմիններու ներքին կազմակերպութեան միջամտելու յաւակնութիւնը չենք ունեցած, ուրիշներու ալ մեր վրայ վերահսկողութեան մը երկնատուր իրաւունքը չենք ճանչնար։

Միութեան խնդիրն առթիւ, 1896—97ին, յայտարարած ենք թէ երկու Կուսակցութիւնները փոխադարձա-

բար մէկ մէկու կը հաղորդեն իրենց մէկ ամբաստանելի յեղափոխականներու անունները։ Օրինաւորութեան և անկողմնակալութեան ամէն պայմանները ապահովող ընդունութեան և դատաստանէ յետոյ, յանցաւոր վնասները կ'արտաքսուին յեղափոխական կազմակերպութեան։ Այնուհետեւ է որ միացեալները կը սկսին միութեան բանակցութիւնները։ Ո՛ր է ժամանակի համար այս է մեր առաջին եւ վերջին յայտարարութիւնը, զոր ո՛չ ոք կրնայ խժեքել իսկ, վասն զի հաւասարութեան և անհատական իրաւունքի պաշտպանութեան անբռնարարելի սկզբունքին վրայ հիմնուած է։

Այսօր խնդիրը երկու Կուսակցութեանց միութեան պայմաններուն վրայ չէ։ Դաշնակցական Կուսակցութիւնը մեր մէկ ընկերոջ ստորագրութեան ներքեւ թուղթ մը հըրատարակած է, նաեւ կարգ մը ալ յանցանքներ վերադրելով անոր։ Այդ թուղթին, այդ մեղադրանքներուն համար թէ՛ մեր ընկերը, թէ՛ Կուսակցութիւնը, թէ՛ ազգը դատական վճիռ կ'պահանջեն։ Այս պահանջումը ո՛ր է յարաբերութիւն չունի Հնչակեան ներքին կազմակերպութեան հետ։

Դաշնակցական Կուսակցութիւնը այդ պարզ խնդրին բնոյթը կը ջանայ ալափոխել յայտարարելով որ «Եթէ «Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութիւնը» ճշմարտութիւնը պարզելու համար մեզ դիմելու կարիք է զգում . . . » Հնչակեան Կուսակցութիւնը Դաշնակցական Կուսակցութեան ո՛ր է դիմում չէ ըրած ճշմարտութիւնը իրեն՝ Հնչակեան Կուսակցութեան՝ պարզելու նպատակաւ. մեր կողմէն դատաւարութեան հրաւեր դրուած է միայն։ Ճշմարտութիւնը պարզողները ո՛չ իրենք պիտի ըլլան, ո՛չ մենք, այլ դատաւորները։

Դաշնակցական Կուսակցութիւնը պէտք է նաեւ գիտնայ որ Պ. Արփիարեան այսօր յանկարծ եթէ մենք իսկ, կացութիւնը պիտի չիփոխուի։ Ինչ որ կը պահանջէինք կենդանութեանը նոյնը պիտի պահանջէինք յետ մահուն։ Մահը սկզբունքը չմեղցներ։

* *

Պիտի չդեղինք ճշմարտութիւնը առանց ս՛եւ երկրայնութեան հաստատելու համար. ըսենք նաեւ որ Պ. Արփիարեանի խնդրին հետ կապուած է սերտիւ ուրիշ բազմաթիւ ընկերներու պատուին ապահովութիւնը։

Դրօշակ 1893 սեպտեմբեր 13ին հետեւալը կը հրատարակէր.

«1890 թուականին յուլիս ամսոյ 15րդ օրը Կ. Պոլսոյ Գում-Գարուի ցոյցին մասնակցող ծանօթ գէմերը «վերջի վերջոյ ուղղակի կամ անուղղակի կերպիւ դարձան մէկ մէկ փաստակար մատնիչներ. մենք ապագային «այդ անձնաւորութեանց զօրքերը ճշմարտապէս երևան հանելու նպատակաւ ամենամեծ զոհողութիւններով «յաջողած ենք ձեռք բերել իրաքանչիւր խոստովանութեան պաշտօնական թղթերը եւ կարգաւ թարգմանելով «պահած ենք ապագային. մենք առ այժմ հրատարակուած թեան կը տանք այս տեղեկագիրը։»

Կ. Պոլսոյ Կեդրոնական Կոմիտէ

Այս յայտարարութիւնը թէ՛ մեր վրայ, թէ՛ ամբողջ ազգին վրայ անխուսափելի պարտականութիւններ կը դնէ։ Տասը տարիներ անցած են այդ թուականէն ի վեր։ Այսօր 1890ի յեղափոխականներէն ոմանք մեռած են, ոմանք երկիրն են, ուրիշներ թաւ արտասահման Դրօշակեան սուրը առկա է ամենուն զիջում վրայ։ Դաշնակցական Կուսակցութիւնը որ ատեն որ ուզէ պիտի կրնայ անոնցմէ իւրաքանչիւրին ստորագրութեամբ խոստովանալի մը հրատարակել։

Եթէ այսօր ազգովին լուծեամք համակերպինք Դաշնակցական Կուսակցութեան այն անորակելի յաւակնութեան թէ ինք ազատ է ո՛ր է հայու ստորագրութեամբ թուղթ մը հրատարակել, առանց պատասխանատուութեան պարտականութիւն ունենալու, ա՛յն Դաշնակցական Կուսակցութիւնը իր անունովը իրեն անպատուաբեր թուղթ

մը պիտի չհրատարակէ. ու իր իրաւունքին պաշտպանութիւնն ալ կախում պիտի ունենայ եղբր «Դաշնակցութեան կամքը արտայայտող մարմիններէ լիազօրութեան»։

«Կախածս կախած, կտրածս կտրած» բռնապետական սկզբունքն է որ պիտի տիրէ։

* *

Ա՛յ կը բաւէ։

Պատիւները ազատօրէն արատաւորելու բռնապետութեան վերջ մը պիտի գնենք։ Այս ալ մե՛ր կամքն է, այս ալ ազգի՛ն կամքն է։

Ազատասիրութեան թէ՛ բռնապետութեան յաղթանակը կը տեսնենք։

«ԿՕՄՊՐՕՄԻԶ» (1)

Չեմ կարծեր որ Դաշնակցական Կուսակցութիւնը Պատուոյ Ատենի մը կազմութեան սկզբունքը ընդունի։ Ու շիտակն ալ ըսելով, այն օրը որ այդ սկզբունքը իրենց մէկ անկեղծօրէն ընդունուի, այն օրը արդէն Պատուոյ Ատենի կազմութեան պէտքը զգալի չըլլար ալ ևս ինքն իր գլխով զգալու զգալու իրենք անհրաժեշտ ու զորմելի են, կեղծարարութիւնը այնքան ակնհայտ է որ Դաշնակցական Կուսակցութիւնը խնդիր իր ձեռքովը կըրնայ լուծել։ Դաշնակցականներուն համար դժուարութիւնը հոն է որ իրենց մէջէն հինգ վեց շարագործ յաջողեցան իրենց գոյութիւնը եւ ոճրագործութիւնը ամբողջ Կուսակցութեան վրէժն փաթելել, որպէս զի իրենք անձնապէս ապահով մնան։ Հիմակ Կուսակցութիւնը դեռ քաջութիւն չունենար ընդունիլ թէ անհատական դատաւարութիւն մը ամբողջ Կուսակցութեան գործը նկատելու չէր։

Այս խնդրին ծագման թուականէն մինչեւ այսօր, մասնաւոր Պատուոյ Ատենի պահանջումը երեւան գալիս ի վեր, բազմաթիւ հայեր որոնք ո՛չ մէկ ո՛չ միւս Կուսակցութեան կը պատկանին, զարմացած են թէ ի՞նչ պատճառաւ Հնչակեան Կուսակցութիւնը անաչառ ընդունութեան մը, անկողմնակալ դատաստանի մը համար եղած բոլոր առաջարկներուն սիրայօժար ընդունելութեան կ'ընէ, իսկ Դաշնակցական Կուսակցութիւնը անոնց կ'ընդդիմանայ, և հիմակ ալ վարանումի մէջ է։ Երկու Կուսակցութիւնները իրարմէ տարբեր ընթացքի կը հետեին այն դիտակցութեամբ թէ դատաւճռի մը հետեւանքները միեւնոյնը պիտի չըլլան մէկուն եւ միւսին համար։ Հնչակեան Կուսակցութիւնը իր ամբողջութեանը մէջ պիտի չհարուածուի եթէ Պատուոյ ատենը ինքն աննպատակ յայտարարութիւն մը ընէ։ Խնդիրը բոլորովին տարբեր է Դաշնակցական Կուսակցութեան համար։ Ինչպէս նախորդ գրութեամբս ըսի, 1893ին Պոլիս լարուած զաւը պարզապէս անհատական գործ մը նկատուած էր, Դաշնակցական Կուսակցութիւնը զայն հետզհետէ ամբողջապէս իրեն վերադրեց, ուստի և ոճրագործութեան պատասխանատուութիւնն ալ հիմակ ամբողջապէս իր վրայ պիտի ծանրանայ, եթէ տակաւին յամառի ինքզինքը համբարաւ հռչակել քանի մը հասարակ շարադրանքներ։

Այդ համբարաւորութեան դադարաւ ի՞նչպէս ծնուեւ ընդունուեցաւ, «Կոմպրոմիզ»ը ի՞նչպէս հաստատուեցաւ։ Այս հարցումին պատասխանը ինէ չ'սպասուիր։ Բայց եղելութիւնը երկու բառով պէտք է իշխենք մ.

Հետզհետէ անուամբ տեղեկութիւնները հաստատած են թէ Մեղքոն Կիւրճեան պարզապէս գործակատար մը եղած է Օհաննէս Խալիֆեանի մը որ Թիֆլիզէն իբր Դաշնակցական ներկայացուցիչ Պոլիս դրկուած էր. ու այս Խալիֆեանն ալ իրեն հետունեցած է Պոլսոյ «Կոմիտէ»ին քանի մը անդամները։ Ասոնց մէջ էն եռանդունը և զոր-

(1) Յարմարիչ

ծանեան եղած է, Օննիկ Դերձակեան մը Այս խումբը չա-
րագործութեան մղուած է բացի կուսակցական նկատում-
ներէ նաև զբաղական փորձութեամբ ալ: Կեղծ խոստո-
ւանագիրներ պատրաստելու գաղափարը յղանալով զայն
գործադիր են ու այդ խաբէբայութեամբ կարեւոր գումար
մը առած են իրենց կուսակցութեան սնտուկէն, իբր թէ
այդ ստակով 1890ի բոլոր Հնչակեաններու հարցաքնն-
նութեանց թուղթերը գնած ըլլան: Եւ ուզած են ի-
րենց այս անարգ գործը իրենց կուսակցութեան վրին
փաթկել, որպէս զի այդ կողմէն ապահով մնան, և մի-
անգամայն ի հարկին իրենց ինքնապաշտպանութեան ու-
ժը Դաշնակցական կուսակցութեան ուժին մէջ գտնեն:
Ինչպէս յաջողցուցին այս գաւը: Իրենց գիտեն: Հիմակ
Կիւրճեանը Թիւրքիա է եւ օսմանեան վարչութեան մը
մէջ պաշտօնեայ: Դիտելի է որ Հնչակեան կամ Դաշ-
նակցական յայտնի, հանրաժանօթ յեղափոխականներէն
միայն Միլլըն Կիւրճեանը եղաւ որ Թիւրքիա վերա-
դարձաւ, թողլով վառնա բացած իր Արծրունեան վար-
ժարանը: Կիւրճեանը տեղի կունենար ինծի դէմ կարգ
մը հրատարակութիւններ ընելէն անմիջապէս ետքը:
Ճիշդ այն պահուն ուր վառնա կը հասնէր Հնչակեան
Կիւրճեանի կիւրճեանի ուղղած կոչնագիրը: Իսկ Խախի-
եան, առեն մը վազանեան ծածկանունով Ամերիկա
խայտառակուելէ յետոյ հիմակ կարծեմ Պարսկաստան
զրկուած է: Իսկ Օննիկ Դերձակեանը հիմակ Արտաշէս
վառնեան ծածկանունով Խախիեանը կը շարունակէ Ա-
մերիկա:

Դիտելի որ առ տղան Ամերիկայի մէջ չափազանցօ-
րէն իրար անցած է կեղծարարութեան գործը խղիւղու-
մոցնել տալու համար: Իրաւունք ալ ունի, վասն զի զի-
տէ թէ քօվը իր գլուխը պիտի պայթի: Կ. Պոլսոյ Կօ-
միտէին զբաղական «ամենամեծ զոհողութիւնները» ան-
շուշտ ի հաշիւ զբարոյութեանց անցուած չեն: Բերա-
նը վարձը չուզեր: Ծորթումը տեղի ունեցեր է օտարկա-
նական պաշտօնատունէն թուղթեր գնած ըլլալու խա-
բէբայութեամբ: Այն պահուն որ այդ բոլոր «խոստովա-
նագրերուն» կեղծարարութիւնը պաշտօնապէս հաստա-
տուի, նոյն իսկ իր կուսակցութեան մէջ պիտի գտնուին
անդամներ որ Օննիկ Դերձակեանին (Արտաշէս վառնեան)
հարցում մը ուղղեն. «Թուղթերը գուն և ընկերներդ չի-
նած էք. զրա՞մը ո՞վ առած է:»

* *

Ո՛չ Պատուոյ Ատենի, ո՛չ ուրիշ միջոցներու դիմու-
մի պէտքը պիտի մնար եթէ Դաշնակցական կուսակցու-
թեան մէջ գտնուած ըլլային գտնէ քանի մը անդամներ
որոնք խորհէին թէ՛ յեղափոխական մարմին մը նախ եւ
առաջ ինքն իր վրայ արթնութեամբ հակելու է, չնայա-
տրելու համար ո՛ր է հերքելն գեղծում: Պարկեշտութեան
այս սկզբունքը դաւանողներուն ուրիշ բան պիտի չմնար
ընել բայց եթէ ճշմարտութիւնը փնտռել, միայն և միմիայն
ճշմարտութիւնը: Իրենց կողմէ Հնչակեան կուսակցու-
թեան դիմում մը խնդրը պարզելու պիտի բաւէր: Ու
կեղծարարները՝ Կիւրճեան, Խախիեան, Օննիկ Դերձակ-
եան (Արտաշէս վառնեան) ուրիշ բան մը պիտի չկրնային
ընել բայց եթէ երեսանկեալ թողութիւն խնդրել Դաշ-
նակցական կուսակցութեանէն, զոր բերին ձգեցին այս ա-
նել վիճակին մէջ, անոր սնտուկէն քանի մը հարիւր ոս-
կի կորցելէ յետոյ:

Պոլսոյ կեղծարարներու իմբակին անբարոյականու-
թիւնը չէ որ զիս կ'ապշեցնէ այլ այն թեթեւամտութիւնը
որով վարուեցան իրենց ձեռնարկին մէջ, առանց եւ
ոչ իսկ նախնական զգուշաւորութիւնները ձեռք առ-
նելու:

Դաշնակցականները շատ մեծ արտա մըն ալ կ'ընեն
երեւակայելով թէ իրենց պատասխանատուութիւնը իրենց
«կամքին իրագործման» կախում ունի: Չենք լրած
թէ ոճրագործները, անհատ ըլլան թէ հաւաքական մար-
մին, իրենց «կամքին իրագործմամբ» զատուելու եւ
զատապարտուելու յօժարակամ գտնուած ըլլան:

Հնչ. կուսակցութիւնը իր պարտականութիւնը ծա-
լ

րայեղ խոստովանած պիտի կատարէ, զատախազ կանգ-
նելով իր բոլոր ընկերներուն պատուին որ մթութեան
մէջ սպանալիքի ներքեւ է: Միայն իմ անունովս չէ որ
կեղծ թուղթեր շինուած են այլ ուրիշ շատերուն ալ, ինչ-
պէս Դոշակը 1893ին հրատարակեց, և հիմակ ալ Յա-
ւելուածովը կը հաստատէ այդ տեղեկութիւնը: Կուսակ-
ցութեան բոլոր անդամները միաձայնութեամբ կը պա-
հանջեն, և պիտի պնդեն որ ճշմարտութիւնը քօղամերկ
յայտնուի: Ինչ ետքը վաղը կարգը որո՞ն պիտի գայ. ո՛չ
ապաքէն Դոշակ կը յայտարարէ թէ՛ «1890 թուականին
«յուլիս ամսոյ 15րդ օրը Կ. Պոլսոյ Գում-Գաբուի ցոյցին
«մասնակցող ծանօթ դէմքեր ի վերջոյ ուղղակի կամ ան-
«ուղղակի կերպիւ դարձան մէկ մէկ փաստակար մատնիչ-
«ներ.» ո՛չ ապաքէն ամենուս խոստովանութեան պաշ-
տօնական թուղթերը իրենց ձեռքն են եղեր: Դաշնակցա-
կանները անգամ մը որ իմ անունովս շինուած կեղծ թուղ-
թերը յաջողին մարտնչել տալ, այլ ևս միւսներուն հա-
մար գործը կը դիւրանայ: Ինչ սարսփելի դաւաճանու-
թեան մը զոհուելու մտանգին մէջ են առանց բացառու-
թեան ամէն անոնք որ 1890ի յեղափոխական անդամնի
շարժման վերամարտիկները եղան:

Ու որոնք որ Հնչակեաններուն կը վերագրեն Դաշ-
նակցականներու դէմ թշնամական ոգի, անոնք լուսաբան-
ուելու համար կրնան դիմել 1893 սեպտեմբեր 15 ի
Դոշակին:

* *

Դաշնակցական կուսակցութեան մէջ եթէ կը զրտ-
նուին հեռաւորներ, անոնք՝ իրաւունքնիս չզոհելու հա-
մար մեր հաստատամիտ առաջադրութեանը համոզուե-
լով, կրնան գուշակել թէ տակաւին ինչ հետեւանքներ պի-
տի ունենայ Դաշնակցականներու յամառութիւնը որով
կուզեն 1893ի անհատական ոճրագործութիւնները ամ-
բողջ դաշնակցական կուսակցութեան գործը նկատել:

Ես քալ մը անգամ տեղի պիտի չի տամ: Այն օրը որ
ամենաշնչին զոհողութիւն մը ընելու յօժարիմ, առանց
Պատուոյ Ատենի վճիռը սրտում ըլլալու, այն օրը ես
արդէն ընդունած պիտի ըլլամ ինծի վերագրուած գործե-
րուն գտնէ հաւանականութիւնը:

Անդունելի կոխի պիտի շարունակեմ. ու քիչ մը եւս
ուպանել յետոյ, պիտի խօսիմ ուղղակի, եւ հրապարա-
կաւ, Կովկասեան Հայոց, բայց այն Հայոց որոնց հետ
բառորդ վար մըն է աշխատակից ու զինակից եղած ենք:

Թիւրքիոյ Հայոցմէ միակ անձն եմ որ շարունակ քա-
նորդ վար մը կ'սովորեան Հայոց համար գրած եմ: Ու
իրենց ալ կը վկայեն թէ ինչ սրտով, ինչ հոգով ինքզինքն
իրենց նօտրեցի յառաջդիմութեան պայքարին մէջ: Փա-
ռափրական զոհացում երբեք չեմ ունեցած, վասն զի եր-
բեք իմ անունովս տող մը չեմ հրատարակած. նիւթական
փոխարինութեան ալ երբեք ակնկառոյց չեմ եղած եւ չեմ
ալ ուզած: Ու իրենց եւ իմ միջև բարեկամութիւնը մեր
զրական եւ օրագրական պատմութեան էն գեղեցիկ մէկ
էջը պիտի կազմէ: Բառորդ վարում մը մէջ ո՛ր եւ է չնչին
անհամաձայնութիւն չէ ծագած մեր միջեւ, նախանձը եւ
առեւելութիւնը չէ դպած մեր սրտերուն, փոխադարձ սէր
և համարանք տածեր ենք իրարու, նոյն իսկ դեռ մինչեւ
վերջի ժամանակներու: Ու հիմա առտու են որ իմ դէմս
կ'ելլեն: Այո՛ Պատուոյ Ատենը պիտի կազմուի, և
ես իրենց վկայութեանը պիտի դիմեմ, ի հարկին հրա-
պարակաւ ալ, և պիտի հարցնեմ թէ կը հաւատն որ ինծի
դէմ իրենց հովանաւորութեամբ հրատարակուածներէն
բառ մը ճշմարիտ ըլլայ: Տեսնեմ պիտի համարձակիմ
երեսո նայիլ:

Հրապարակաւ դէմ առ դէմ դալու ժամանակը հասաւ:
Ա՛լ մամէ ոք իր գործին անձնապէս պատասխանատուն է:
Ընդհանուր անպատուութեան մէջ անհատական պատիւը
փրկելու յոյսը պէտք է մոռցուի: Գողութեան, զբարտառու-
թեան, կեղծարարութեան ոճրներու մասնակցող Կով-
կասոցի հրապարակագիրները, վիպասանները, համալսա-
րականները պէտք է ականէ յանուանէ ճանչցուին թէ՛
Ռուսիոյ և թէ՛ Թիւրքիոյ Հայոց մէջ, ու արձանագրուին
մեր զրական ու հրապարակագրական կեանքի պատ-
մութեան մէջ:

Անհատական պատերազմ կը հրատարակէ ինծի
դէմ: Լա՛ւ: Կը պատերազմիմ:

Դիտեմ թէ Կովկաս ու Եւրոպա շատերուն արտօնելի
պիտի չըլլայ այս մարտնչումս որուն դիմելու պիտի հա-
կադրուիմ եթէ անոնք որ ուղղամտութեան ու բարոյակա-
նի բարոյիչները կը ներկայանային, շարունակեն երեսն
ամպհովանիին ներքեւ պահել այն անարգ արարածները
որոնք Կիւրճեան, Խախիեան, Օննիկ Դերձակեան (Ար-
տաշէս վառնեան) կը կոչուին, և նմանները: Այո՛ անհա-
տական մարտնչումս իրենց արտօնելի պիտի չըլլայ, բայց
անշուշտ ինծի, իմ պոլսեցի բարեկամներուս, մեր Կու-
սակցութեան արտօնելի ըլլալու նպատակաւ չէ որ իրենց
ալ կեղծարարներու, զբարտաչներու զօրավիդ կը հան-
դիսանան:

Չեմ ըսեր թէ առանց խորապէս ցաւելու պիտի պար-
տաւորուիմ զէնք դարձնել ընդդէմ այն Կովկասցիներուն
զորս բարձր գաղափարներու տէր, պատուաւոր բարե-
կամներ ճանչցած էի, եւ որոնց համար տասնը հինգ տա-
րի Թիւրքիոյ մէջ կուրծք տուած եմ ամենուն: Բայց կու-
զէի գիտնալ թէ յետ քսանհինգ տարուան աշխատակցու-
թեան և բարեկամութեան, երբ կը փափաքեմ որ իմ անու-
նով ԳիՏԱԿՑՕՐԷՆ կեղծ թուղթեր հրապարակ չհա-
նելու շափ գտնէ պարկեշտ գտնուին, արդեօք չափազանց
պահանջկոտ եղած կ'ըլլամ:

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ՁԱՅՆ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Կիպրոսէն խումբ մը չլզոց հայեր մեր Մասնաճիւղին
միջոցաւ ընդարձակ նամակով մը մենէ կը խնդրեն ստի-
պողականութիւն տալ Պատուոյ ատենին կազմութեան,
յայտարարելով ի միջի այլոց թէ՛ «Հայկական խնդիրը
ծնունդ առնելէ ի վեր կուսակցականաց իրարու դէմ յա-
րուցած անպատիւ ու աղտոտ կոխները և անհատակա-
նաց կասկածելիութիւնը պատրուակելով՝ այդպիսեաց նը-
կատմամբ խօսուած, զրուած ու տարաձայնուած ահալի
օճիւրները Հայութեան ողջախոհ գաղափարը յեղափո-
խութեան կամ ազգային սուրբ գաղտնի մասնակցելու և կամ
համակրելու գաղափարէն ու գործէն խրտչեցուցած ու զայն
բոլորովին անտարբեր պահպանողականութեան մատնելէ
զատ, յեղափոխականաց դէմ ալ խուլ հակառակութիւն
մը սնուցանելու պատճառ եղած են:»

* *

Նիւ Պրիթեն Ապրիլ 15, 1900

Պատուաւոր խմբագրութեան «ՄԱՐՏ»-ի

Ամերիկայի Միացեալ-Նահանգաց Նիւ Պրիթեն քա-
ղաքի Հայ հասարակութիւնը ապրիլ 15ին մի ընդհանուր
արտակարգ ժողով գումարելով ցաւով սրտի ի նկատի
առաւ այն ներքին բուռն կոխը որ տեղի կունենայ Դաշ-
նակցութեան եւ Հնչակեան Ազգային կուսակցութեանց
միջեւ: Ներկայ ըստիւն ուր պէտք է բոլոր հայ ուժեր
եղբայրաբար համախմբուած ձեռք ձեռքի տուած յառաջ
տանին Հայրենիքի փրկութեան գործը, ոկսած են զիրար
ամբաստանել եւ անձնական կուսակցական, վատ կիր-
քերու եւ ոխակալութեան թատերաբեմ վարձնել Թեղա-
փոխութեան սուրբ ասպարէզը: Այդ վատ ու վայթակղե-
ցուցիչ ընթացքը իր յոռի սպաւորութիւնը ձգած է Հայ
հասարակութեան մաքին, ոգւոյն վրայ երկու կուսակցու-
թեանց նկատմամբ, և ամենալատն այն է որ երկու կու-
սակցութիւնը իրարու դէմ զինուած են Կայսերի յատուկ
եղբայրասպան զէնքով, փոխան Հայրենիքի ընդհանուր
թշնամուն դէմ զինուելու եւ իրենց կոչման ծառայելու:

Նիւ Պրիթենի Հայ հասարակութիւնը կը պահանջէ
երկու կուսակցութիւններէն և անոնց զեկամարներէն յա-
նուն թշուառ Հայրենիքի եւ ճշմարտութեան ու արդա-
րութեան որ փութան կազմելու անկախ ու չլզոց ազգա-
յիններէ բաղկացեալ ընկերական Պատուոյ Ատեն
մը, որ լիազօր պաշտօն ունենայ քննելու երկու կուսակ-

ցութեանց եւ վարչիներու իրարու վրայ բարդած ամբաստանութիւնները, որպէս զի ճշմարտութիւնը հրապարակ զայ և վերջ տրուի ներկայ վատ ու քանդիչ ուղղութեան, որ ուժերու շլատում կը պատճառէ եւ ճշմարտութիւնը վարարուած կը պահէ: Նաեւ տեղւոյս հայ գաղութը յօժարութիւն կը յայտնէ պէտք եղած ատեն նիւթապէս օժանդակել Պատույ Ատենանի կազմութեան ծախուց համար:

Նիւ Պրիթնի հայ հասարակութիւնը կը յայտարարէ երկու կուսակցութեանց թէ այն կուսակցութիւնն կամ առաջնորդ կուսակցութիւնն որ խոյս կուտայ ներկայանալ լու Պատույ Ատենան, կամ արգելք կը հանդիսանայ այդպիսի մի ատեն կազմուելուն, մենք զանիկա պիտի կոչենք ՍՏԱՍՕՍ, ԴԱԻՍՃԱՆ, ԶՐԱՊՐՏԻԶ:

Ի դիմաց Նիւ Պրիթնի Հայ հասարակութեան
Հոգաբարձութեան անդամք
Ատենապետ Վահէ Գրիգորեան
Ատենապետ Եւնուք Ռաիկիւեան
Գ. Ն. Ստեփանեան
Ա. Պ. Նորատուրեան
Պ. Մ. Խախաւուն

Յ. Գ. այս նամակի մի օրինակ ալ զրկեցինք Դրօշակի խմբագրութեան ի հրատարակութիւն:

* * *

Պոստոն, ապրիլ 24

Ապրիլ 22ին գումարուած Պոստոնի Հայոց ընդհանուր ժողովը կորոշէ զիմել Յեղափոխական երկու կուսակցութեանց «Դաշնակցական և Հնչակեան» որ Արփիար Արփիարեանի վրայ բերուած ամբաստանութիւնները քննելու համար չէզոք ատեն մը գումարուի ճշմարտութիւնը երևան հանելու:

Կորոշէ նաև հրաւեր կարգաւ Ամերիկայի միւս հայաբնակ քաղաքներու որ նմանօրինակ դիմումներ ընեն երկու կուսակցութեանց:

Ժողովի կողմէն
Ատենապետ Ատենապետ
Ա. Տիրան Ի. Խախախեան

Յ. Գ. Որոշման օրինակներ զրկուած են Մարտի, Դրօշակի, Զայն Հայրենեացի խմբագրութեանց հրատարակութեան համար:

* * *

Սէլէմ, Մաս, 3 մայիս 1900

Հնչ. Ազգ. Յեղ. Կոչակցութեան Կեդր. Վարչութեան
Յարգելի Հայրենակիցներ,

Նկատելով որ երկար ժամանակէ ի վեր Յեղափոխական կուսակցութիւններու մէջ զգուշութիւն եւ անհամաձայնութիւն կը տիրէ ի վնաս հայ ժողովրդի քաղաքական ազատութեան շահերուն:

Նկատելով որ այս անհամաձայնութեան զրկուած պատճառներն են քանի մը անձանց վրայ եղած ծանր ամբաստանութիւններ:

Նկատելով որ երկու կողմէն ալ Կուսակցութիւնները յամառ ընդդիմախօսութիւններով պիտի ջանան թէ ամբաստանել և թէ իրենք զիրենք արգարացնել:

Վերջապէս նկատելով որ խնդիրը իր այս վիճակին մէջ բնաւ վերջ մը պիտի չգտնէ և հայ ժողովուրդը խնդր պիտի տուէ և իր հաղաքուոր աղաներուն հետ այդ բարոյական սառնաստանին ալ պիտի ենթարկուի:

Սէլէմի Հայ գաղութի իր ապրիլ 29ի Ընդհ. Ժողովին մէջ որոշեց որ հանրագործութեամբ մը Զեպի դիմէ, որպէս զի այս խնդիրներուն միանգամ և ընդ միշտ վերջ մը տալու համար չէզոք անձեր կազմուած իրաւարար Ատենանի մը յանձնէ զանոնք. ատենանի վճիռը վերջնական ըլլայ, և այսպէսով միութիւնն իրականանայ, բուն մը որ թէ յեղափոխականներու եւ թէ հանուր հայ ժողովրդի փափաքն է:

Ի դիմաց Սէլէմի Ընդհ. Ժողովին
Ատենապետ Ատենապետ
Յ. Ն. Ֆրանկեան Ս. Թ.

Յ. Գ. Ասոր պատճենը զրկուած է նաև Հայ. Յեղ. Դաշնակցութեան պատուարժան Բիւրօներուն:

* * *

Նիւպրիթիօրթ 14 Մայիս 1900

Հնչ. Կոչակցութեան Պատուարժան Կեդր. Վարչութեան
Ի Լոնտոն

Ազնիւ Հայրենակիցներ

Ժամանակէ մը ի վեր է որ Հնչ. Կուսակցութեան Կեդրական վարչութեան անդամներէն Պ. Ա. Արփիարեան կամբաստանուի ծանրակշիւ յանցանքներով Դաշնակցական Կուսակցութեան կողմէ: Բայց կը ցաւինք թուելու որ ցարդ երկուստեք թեր ուղիւ հրատարակութիւնները, խնդիրը չլուսարանելէ զատ զգուշութեամբ չափ տալով արգելք եղանակ մը կ'ազդենք որ սոյն խնդրի մէջ ճշմարտութիւնը լոյսի պէս տեսնուի մի կարծեք թէ ժողովուրդը բարոյականի ու արժանապատուութեան զգացումէն անտարբեր զատարկացած է որ երկու կուսակցութեանց իրարու դէմ գրածները, սրճարաններուն անիւնները կարողաւոր ժամանակ անցրնէ, եւ ատու իր խղճին զոհացում տուած ըլլայ: Սոյն խնդրին մէջ հանրային բարոյականի խնդիրը կայ, վասն զի Պ. Արփիար յեղափոխական տապալը մտնելէ շատ առաջ իբր գրադէտ, տերուհներու մտաւոր զարգացման գործին մէջ անհազին դեր ունեցած է, հետեւաբար սոյն խնդիրը, զուտ անհատական բոլորէն աւելի Ազգային կրնար համարուիլ: Կը զգանք նաև որ վերոյիշեալ խնդիրը մեծապէս փառած է վերջին տարիներու Յեղափոխական գործունէութեան, վասն զի մեր յեղափոխական մարմինները փոխանակ իրենց զէնքը մեր թշնամին դէմ զարձնելու իրարու հետ կը կռուին, Ինչպէս անդին Մայր-Երկրին մէջ բռնութիւնը իւր տուկայի աւերը կը գործէ անպատմելի եղանակաւ:

Ուստի Նիւպրիթիօրթի ժողովուրդն ալ կուգայ իւր ձայնը խառնել հասարակաց ձայնին հետ, և պահանջել որ քաղաքակիրթ ազգերու մէջ բնորոշուած օրինաց և սիրդբանց համաձայն չէզոք եւ անկողմնակալ անձերէ պատուոյ ատեն մը կազմուի, և սոյն գալթակալից վիճարանութիւնը միանգամ ընդ միշտ փակուի:

Այս կը պահանջեն ազգին գերագոյն շահերը:

Ազնիւ Հայրենակիցներ,

Դենք սոյն դիմումը կ'ընենք մեր խղճի պարտականութեան մը մը, եւ կը հաւատանք որ իբր անկեղծ հայրենասէրներ պիտի փութանք մեր ձայնին արձագանքը ըլլալ:

Ընդունեցէք մեր խորին յարգանաց հաւատարմքն

Ի դիմաց Նիւպրիթիօրթի Ժողովրդային Յանձնախմբի
Ատենապետ Ատենապետ
Ն. Ղազար Սարգիս Մարկոսեան

* * *

Լոնդէ Մաս, 17 Մայիս 1900

Հնչ. Կոչակցութեան Կեդրական Կեդր. Վարչութեան
Ի Լոնտոն

Ազնիւ Հայրենակիցներ,

Յաւելի է թուի որ այս վերջին տարիներու երեւան եւ կամ (Պ. Ա. Արփիարեանի խնդիրը) ցարդ իւր օրինաւոր լուծումը չբաւանարով, տնտես հետաքննելու առաջ բերաւ Ազգային կենսական խնդիրներուն նկատմամբ:

Տեղիո Հայ գաղութականութիւնը արձագանք տալով Պ. Պ. Յ. Խախախեանի և Կ. Յակոբեանի կողմէ եղած Պատուոյ ատենանի կոչին, ամուսն 7ին բնականաբար ժողով մը գումարելով որոշեց պահանջել անպապաղ Պատույ Ատենանի մը կազմուիլ: Որուն անգամները ըլլալու են բարոյական չէզոք եւ անկողմնակալ անձնաւորութիւններ:

Արդ, սիրելի Հայրենակիցներ, ստորագրեալը իմը մասնախմբի անդամներ, սոյն ժողովոյ կողմէն արտօնեալ ենք խնդրել և պահանջել ձեզնէ որ, ձեր կողմէն ամէն անգամ ջանք չխնայելով Ատենանի կազմուիլը փութացնէք, որուն միակ միջոցն է խնդրին վերջնական լուծման: Հաւատակ պարագային եթէ մէկ կամ միւս կողմէն փախուտ տալու փորձեր ըլլան, յայնժամ իրաւունք պիտի ունենանք մէկ կամ միւս կողմը ճանչնալ Զրպարախ կամ Դատաւարաբաւ: Համեցէք ընդունիլ մեր յարգանաց հաւատարմքը:

Ի դիմաց Մասնախմբի
Տ. Գազանեան
Ջ. Պապիկեան

Յ. Գ. Սոյն նամակը երկու օրինակ ըլլալով կը դրուի ենք երկու կուսակցութեան օրինակներուն Մարտի եւ Դրօշակի ի հրատարակութիւն:

* * *

Ուայմնսուիլ (Ամերիկա) 28 Մայիս 1900

Կեդր. Վարչութեան Հնչ. Կոչակցութեան

Ազնիւ Հայրենակիցներ,

Այս երկուստեք իւր կողմէն ձեզ որ ամուսնու 13ին, մասնաւոր չէզոքականներու կողմէն ժողով մը տեղի ունեցաւ, այն պատճառաւ որուն նիւթն էր Պրն. Արփիար Արփիարեանի մասին եղած ամբաստանութիւններն՝ որ սրբան ստոյգ ըլլալը անյայտ է հասարակութեան, եւ այդպիսի ամբաստանութիւնները վհատեցուցին ու անբարոյացուցին են մեր ազգային խնդրին նկատմամբ որ եթէ լոնք ու ձայն չի բարձրացնենք պիտի մնայ մինչ յաւատ:

Անտարակոյս մեծ գորագործութիւն մըն է մեր ազգային Յեղափոխական կուսակցութիւններուն անմիտութիւնը, եւ մէկըմէկու դէմ հակառակորդական զեղծութեան, որ որ բոլոր օրէ առաջ կը բերուին թշնամական ոգիներն որ անվայել է մեզ համար, եւ փոխանակ հասարակութեան բարի օրինակ ըլլալու ընդհակառակը յուսահատութեան կը դատապարտէք ժողովուրդը:

Անշուշտ այս մասին եթէ երկու կուսակցութիւններն մէկըմէկու խօսքի չհամազուէն և պնդելով մը իւրաքանչիւրը կողմնակալութեամբ իւր կողմը քաշէ, անհրաժեշտ դիմաւորութեան էք թէ՛ մեր ժողովուրդը նորէն նոյն միտութեան մէջ պիտի մնայ եւ ստուգապէս կարող չպիտի ըլլան դիտաւար արդարն ու մեղաւորը:

Արդ այսպիսի ամբաստանութիւններով միշտ աւելի անբարոյացուցիչ ազդեցութիւններ կ'ունենան մեր ժողովուրդին սրտերուն մէջ. եւ հետզհետէ կը զրանան և անվայել գաղափարներով կը յետաձգեն ազգային խնդրին ու կը մոռնան այն Սուրբ Նահատակներուն թափած արիւններն, որ այսօր քանի տարիներէ ի վեր զուր կը թափուին անմեղ արիւններ մեր սուրբ Հայրենիքին համար:

Ուստի Ժողովը որոշեց և պաշտօն տուաւ մեզի պահանջելու երկու կուսակցութիւններէն որ Պատուոյ ատեն մը կազմելով քննադատութեան տակ անուի ու վերջ տրուի այս ամբաստանութեան, եւ մոռնալ այս խնդիրը. ու միտութիւն մը կազմելով ձեռք ձեռքի տալով գործել համեմալ իրարու մէջ այն գործն որ ամենուս ալ փափաքելի է գործելու:

Այս առթիւ կը պահանջենք յանուն ազգային գերագոյն շահերուն, որ երկու կուսակցութիւնները համաձայնելով չէզոք, ուղղապատ, ներքալիտ եւ օրէնսդէտ անձերէ պատուոյ ատեն մը կազմեն ու քննեն ամբաստանութիւններն, եւ վերջնականապէս լուծուի այս խնդիրը, եւ որուն վերջը պարտաւորիչ ըլլալ երկու կուսակցութեանց համար ալ:

Ազնիւ Հայրենակիցներ, կը յուսանք որ պիտի հաճիք մեր սոյն պաշտօնագիրը հրատարակել ձեր կուսակցութեան թերթին մէջ: Ընդունեցէք մեր յարգանքները:

Ի դիմաց Ուայմնսուիլի Յանձնախմբի
Ատենապետ Ատենապետ

Խ. Մ. Նորայեան Կ. Ն. Գրիգորյան

Յ. Գ. Այս թուօք մի օրինակ ալ Դրօշակի պատ. խմբագրութեան զրկուած ենք:

L. FRANK,
27, CHESTERTON ROAD,
(ENGLAND) LONDON, W.
ՏՊԱՐԱՆ ՀՆՁ. ԱԶԳ. ՅԵՂ. ԿՈՒՍԱԿԻՑՈՒԹԵԱՆ